ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 212-Ա

24 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2021Թ

ԱՇՈՏ ՓԱՆԴՈՒՆՑԻՆ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 3-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով և հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Արտավանի միջնակարգ դպրոց», «ՀՀ Վայոց ձորի մարզի Սարավան գյուղի հիմնական հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ների միացյալ կառավարման խորհրդի նախագահի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 20 /Մ-8916-2021/ գրությունը և Աշոտ Փանդունցի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2021 թվականի դեկտեմբերի 27-ից Աշոտ Փանդունցին նշանակել «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Սարավան գյուղի հիմնական հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 /հինգ/ տարի ժամկետով:

2. 2021 թվականի դեկտեմբերի 27-ից լուծել Աշոտ Փանդունցի հետ կնքած 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N344 աշխատանքային պայմանագիրը:

12/24/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ